

Հ. Ն. Կարապետյան

Ս Ա Ր Գ Ի Ս Լ ՈՒ Կ Ա Շ Ի Ն

(Մենդյան ուրստունամյակի առթիվ)

Կոմունիստական պարտիայի և սովետական հասարակության պատմության մեջ Լուկաշինի գրաված տեղը այնպիսին է, որը յիովին բավական է մի գործի անվանը պատմական հարատևություն տալու և առաջ բերելու կոմունիզմ կառուցողների խոր հարգանքը նրա նկատմամբ: Լուկաշինը հենց ինքը կոմունիզմի անխոնջ կառուցող էր: Նրան վերագրվելիք բոլոր բնորոշումների մեջ կառուցող բառն է թերևս ամենաճիշտն ու ստույգը: Քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա Լուկաշինն սկսեց առանձնապես կարևոր դեր խաղալ, երբ հին կարգն արդեն խորտակված էր, երբ այն խորտակողների առջև ամբողջ հասակով ծառանում էր նոր հասարակարգ կառուցելու խնդիրը: Եվ Լուկաշինն աշխատավոր մարդու գործի նկատմամբ խոր անձնվիրություններով, աշխատասիրությամբ և գործիմացությամբ դարձավ սոցիալիստական հեղափոխության նվաճումներն ամրապնդող ականավոր կուսակցական ու պետական գործիչ, ժողովրդական տնտեսության տաղանդավոր բոլշևիկյան կազմակերպիչ: Իր պետական ու կուսակցական գործունեության սկզբնական ժամանակաշրջանում՝ Դոնում և Հայաստանում Լուկաշինը իր եռանդի մեծագույն մասը հատկացնում էր տնտեսական շինարարությանը: Հետագայում նույնպես՝ մինչև իր կյանքի վերջը, կանգնած լինելով երկրի ժողովրդական տնտեսության ղեկավարման բարձր պոստերում, նա հիանալի անձնավորում էր փայլուն կոմունիստ շինարարին ու տնտեսավարին, սոցիալիզմի աչքի ընկնող կառուցողներից մեկին՝ համամիութենական մասշտաբով:

Լուկաշինը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանի լենինյան տիպի գործիչներից մեկն էր: Ժամանակաշրջանի գլխավոր գիծը կառուցումն էր: Եվ Լուկաշինը կառուցող էր: Բոլոր դեպքերում նա ղեկավարման լենինյան դպրոցի սանն էր: Նա ուսումնասիրում էր այդ դպրոցի դասերը և աշխատում կիրառել: Այդ նրան հաջողվում էր, որովհետև գիտելիքներից ու փորձից, կազմակերպական ընդունակություններից բացի, գործին նվիրված էր մինչև անձնագոհության աստիճան: Ոչ միայն գործիմաց էր, այլև սկզբունքային և կարգապահ: Այն, ինչ պահանջում էր ուրիշից, աշխատում էր նախ ինքը կատարել: Իր անձնական, անհատական ցանկություններին բավարարություն չէր տա, բայց կաշխատեր, որ գոհ մնան շարքային աշխատողները: Որովհետև, գիտակցելուց բացի, իր փորձով համոզվել էր, որ և՛ փոքր, և՛ մեծ պատմությունը նրանք են կերտում, որ ինչքան էլ շատ լինեն ու մեծ նշանավոր պատմական անձնավորությունները, ինչպես սոցիալիստական հեղափոխության, նույնպես և սոցիալիզմի ու կոմունիզմի իսկական հեղինակը մնում է աշխատավոր ժողովուրդը:

* * *

Սարգիս Լուկաշինի ծննդավայր Թուփտի՛ գյուղը ընկած է Դոնի տափաստանի մի ընդարձակ փոստրակում՝ Ռոստով քաղաքից 18 կմ հեռավորության վրա։ Նրա հայրը՝ Լուկաշ Սրապիոնյանը, պարզ ու հասարակ մի մարդ էր, թափառական հայի բարդ ու դժվարին կյանք ապրած աշխատավոր գյուղացի։

Սարգիսը տանը դարձավ դրաճանաչ։ Տեսավ իր հոր ու հայրենակիցների անխոնջ աշխատանքը, լսեց նրանց զրույցներն ու ավանդույթունները՝ հայի շարքաշ կյանքի, նրա աշխատասիրովյան ու աշխատանքի մասին։ Եվ մանկուց նրա մտքում տպավորվեց աշխատանքը որպես գոյույթյան ամենազոր միջոց, որը կարող է նաև երջանկույթյան միջոց դառնալ։ Այս տպավորություններով նա 1896-ին ընդունվեց Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցը և ավարտեց այն 1902 թ.։ Հաջորդ շորս տարիներին նա սովորեց Բաքվի ուսուսական գիմնազիայում։ Վերջինս ավարտելուց հետո նույն տարում ընդունվեց Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, միաժամանակ սովորելով մայրաքաղաքի պոլիտեխնիկական ինստիտուտի տնտեսագիտական բաժնում։ Ուսման ծարավ երիտասարդը ցանկանում էր շատ գիտելիքներ կլանել, որ վաղը՝ հասարակույթյանը ծառայելու ժամին, գիտույթյան պակասը չճնշեր նրան։ 1911 թ. նա ձեռք բերեց իրավաբանի դիպլոմ, ավարտելով նաև պոլիտեխնիկական ինստիտուտի երրորդ կուրսը։ Մինչև 1917 թ. կեսերը նա մնաց մայրաքաղաքում։

Եվ այդ ամբողջ ժամանակամիջոցում Լուկաշինը յուրացնում էր բարձրագույն բանվորական ուսուցիչին շարժման դասերը։ Բր հայրենի քաղաքում լսելով բանվորական առաջին լողունգները և ականատես լինելով բանվորների բողոքի ցույցերին, Բաքվում նա 1904 թվականից գիմնազիստի իր զգեստով կանգնեց նավթաշխարհի մարտնչող պրոլետարիատի շարքերում։ Ազգային հովերով տարված պատանին սկզբնապես հրապուրվեց սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպույթյան (սպեցիֆիկների) քարոզներով։ Բայց արդեն հաջորդ տարին՝ 1905-ին, նա մտավ ՌՍԴԲՊ շարքերը։ 1906 թ. Պետերբուրգում Լուկաշինը լիովին հեռացավ սպեցիֆիկներից և իր կյանքն ու գործունեությունը կապեց բուլշևիկների պարտիայի հետ։

1907 թ. Լուկաշինը Տերիոկի քաղաքում մի խումբ կովկասցի ուսանողների հետ միասին հանդիպեց Վ. Ի. Լենինին, լսեց նրա զեկուցումը։ Հետագայում՝ 1909—1910 թվականներին, Լուկաշինը լսեց Վ. Ի. Լենինի մի շարք զեկուցումներն ու դասախոսությունները, բայց այս անգամ արտասահմանում, ուր ստիպված էր մեկնել որպես քաղաքական վտարանդի։ Մեկ տարի Լուկաշինը, ընդհատելով ուսումը, եղավ Բեռլինում և Ֆրանսիայի ու Շվեյցարիայի մի շարք քաղաքներում, ուսումնասիրեց արտասահմանյան գրականությունն ու մասնավորապես գերմաներեն լեզուն, ծանոթացավ ալդ երկրների տնտեսական կյանքին, առանձնապես հետաքրքրվելով արդյունաբերությամբ։

1910 թ. վերադառնալով Պետերբուրգ, իսկ հաջորդ տարին ավարտելով ուսումը, Լուկաշինը երկար ժամանակ շկարողացավ ակտիվ կուսակցական գործունեություն ծավալել։ Կարճ ժամանակ նա աշխատեց որպես երգվյալ հավատարմատարի օգնական, իսկ շուտով աշխատանքի անցավ որպես մայրաքաղաքի հայոց Եկեղեցական խորհրդի շենքերի կառավարի։

1 Ս. Լ. Լուկաշինը ծնվել է 1885 թ. հունվարի 13-ին։

Այդ ժամանակամիջոցում նա մոտիկից ծանոթացավ մայրաքաղաքի հայ առաջադեմ ինտելիգենցիային: Նա ընկերական-մտերմական կապեր հաստատեց մայրաքաղաքում ապրող հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանի հետ, որի խորհրդով Լուկաշին ազգանունը դարձրեց իրեն ծածկանուն, և հետագայում այդպես էլ հայտնի դարձավ կուսակցական լայն շրջաններում:

Լուկաշինը հեղափոխական կազմակերպչի իր ընդունակություններն առաջին անգամ դրսևորեց ցարակառն կարգերի անկման ժամանակամիջոցում, երբ նա մայրաքաղաքի զորամասերից մեկի շարքային սակրավոր էր: Զինվորական մասսայի կողմից սիրված լինելով և նանաչված իր հակացարական տրամադրությամբ, սկզբում նա ընտրվեց զորամասի զինվորական կոմիտեի անդամ, իսկ շուտով նաև նախագահ: Լուկաշինը դուրս եկավ հեղափոխական շարժման ասպարեզ: Նույն 1917-ին նա ընտրվեց Պետրոգրադի քաղաքային դումայի անդամ և եռանդով մասնակցեց նրա բոլշևիկյան ֆրակցիայի աշխատանքներին:

Հոկտեմբերյան զինված ապստամբության օրերին Լուկաշինին կարելի էր տեսնել ժամանակավոր կառավարությանը դեռևս հավատարիմ մնացած ուժերի դեմ կռվող մարտիկների շարքերում: Դեկտեմբերի սկզբներին Լուկաշինը եկավ Դոնի Ռոստով, որտեղ նրան սպասում էր բոլշևիկ հեղափոխականի բեղմնավոր գործունեություն:

1918 թ. մարտին Դոնի սովետների առաջին համագումարը Լուկաշինին ընտրեց նորաստեղծ Դոնի հանրապետության արդարադատության ժողկոմ: Մայիսին, Դոնի հանրապետության ժամանակավոր անկումից հետո, Լուկաշինն անցավ ընդհատակ, հետագայում, մինչև 1919-ի սկիզբը պատասխանատու աշխատանքներ կատարեց Մոսկվայում, սկզբում՝ ՌԿ(բ)Պ Մոսկվայի մարդային բյուրոյում, իսկ հետո Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովում: Բայց երբեք կապը չխզեց հայրենի մարզի բոլշևիկներից, նրանց մղած պայքարից: 1918 թ. սեպտեմբերին կուսակցության Կենտկոմը ստեղծելով ՌԿ(բ)Պ Դոնբյուրո, Լուկաշինին նույնպես, կուսակցական այլ աչքի ընկնող գործիչների՝ Ա. Ա. Ֆրենկելի, Պ. Բ. Բլոխինի, Ի. Ա. Դորոշևի, Ի. Վ. Ռեշետկովի, Ս. Ի. Սիրցյովի հետ միասին հաստատեց նրա կազմում:

1920 թ. հունվարին ազատագրվեց Դոնի Ռոստով քաղաքը: Լուկաշինը, որն այդ ժամանակ գտնվում էր Մոսկվայում, ապրիլին վերադարձավ Ռոստով և անմիջապես ներգրավվեց ղեկավար կուսակցական ու սովետական աշխատանքներում: 1921 թ. մարտի 2-ին նա ընտրվեց կուսակցության Դոնի կոմիտեի քարտուղար:

1920 թ. մարտից մինչև 1921 թ. մարտ ամիսը Դոնում սովետական իշխանության վերականգնման տարին էր: Լուկաշինը կարևոր դեր խաղաց մարզում սովետական պետական ապարատի ստեղծման ու ամրապնդման, կուսակցական կազմակերպությունների աշխատանքներն ուժեղացնելու գործում: Նա համարձակ ու անվախ պայքար մղեց Դոնի կողակային վերնախավի և բուրժուազիայի մնացուկների հակասովետական գործողությունների դեմ: Եվ շատ արագ ձեռք բերեց մեծ հեղինակություն և լայն ճանաչման արժանացավ: 1920 թ. դեկտեմբերին Մոսկվայում բացված սովետների համառուսաստան-

² Տե՛ս Բարտարխիս Բոստովսկոյ օբլաստի (ԲԱՐՕ, Բոստով ու Դ), ֆ. 4, օպ. 4—1, Էժ. ԽՐ. 65, թ. 1.

յան 8-րդ համագումարին Դոնի մարզից. ընտրված երկու պատգամավորներից մեկը Լուկաշինն էր: Այդտեղ Լուկաշինը ընտրվեց Համառուսաստանյան Կենտգործկոմի անդամ: Հետագայում ՌԿՊ ԿԿ-ի որոշեց Լուկաշինին աշխատանքի ուղարկել Հայաստան: Այդ առթիվ Մարտի 13-ին Դոնի կոմիտեն անհրաժեշտ դատավ՝ «Հեռագրով խնդրել Կենտկոմին Լուկաշինին Դոնկոմում թողնելու մասին, որը ժայրահեղ անհրաժեշտ է Դոնում ստեղծված հանգամանքների կապակցությամբ»³: Բայց կուսակցության Կենտկոմը նորից պնդեց իր որոշումը: Դոնկոմը շարունակեց միջամտել, խնդրել: Կենտկոմի կազմբյուրոն վերջին անգամ ուղղակի դիմեց կոմունիստ Լուկաշինին և պահանջեց, որ նա անհապաղ կատարի կուսակցության Կենտկոմի որոշումը: Ապրիլի 8-ին կուսակցության Դոնի կոմիտեն իր հատուկ նիստում կրկին որոշեց, որ Դոնի կոմիտեի քարտուղարի համար իրենց «...միակ թեկնածուն հանդիսացել և հանդիսանում է ընկ. Լուկաշինը»⁴:

Բայց, քանի որ կուսակցության Կենտկոմի կազմբյուրոյի հեռագիրը վերաբերում էր անձամբ Լուկաշինին, ուստի պետք էր լսել նաև նրա խոսքը: Ահա և Լուկաշինի խոսքը. «ՌԿՊ Կենտկոմի վերջին գրությունը ստացվելու պահից ինձ հայտարարում եմ ոչ ենթակա Դոնի կոմիտեի բյուրոյին և ՌԿՊ Կենտկոմի Հ.Լ. Արևելյան բյուրոյին: Ես պետք է անհապաղ մեկնեմ Հայաստան»⁵:

Ապրիլի 24-ին Լուկաշինը վերջին անգամ մասնակցեց Դոնի կոմիտեի նիստին և արդեն հաջորդ օրը նախապատրաստվում էր Հայաստան մեկնելու:

Նույն այդ օրերին Դոնի Ռոստով կայարանում կանգ առավ բազմաթիվ վագոններից բաղկացած մի գնացք, որը ղեկավարում էր Մոսկվայից նույնպիսի որոշմամբ Հայաստան մեկնող Ալեքսանդր Մյասնիկյանը: Լուկաշինը բարձրացավ Ալ. Մյասնիկյանի վագոնը և ճանապարհ ընկավ դեպի Հայաստան:

ՌԿՊ Կենտկոմի որոշմամբ Լուկաշինը նշանակվեց ՀԿՊ Կենտկոմի քարտուղար: Մայիսի 19-ին Լուկաշինի նախագահությամբ կայացած ՀԿՊ Կենտկոմի պլենումում կազմվեց Սովետական Հայաստանի առաջին ժողկոմսովետը, որի նախագահ նշանակվեց Ալ. Մյասնիկյանը: Լուկաշինը մնաց ՀԿՊ ԿԿ-ի քարտուղարի պոստում, ստանձնելով նաև Հայաստանի ժողտնտխորհի նախագահի պաշտոնը: Մեկ տարի հետո Լուկաշինը նշանակվեց ժողկոմսովետի նախագահ:

Հայաստանում Լուկաշինն աշխատեց նոր տնտեսական քաղաքականության կիրառման առաջին շորս տարիներին՝ մինչև 1925 թ. հունիսը: Այդ ժամանակամիջոցում նա իր ջանքերը գործադրեց հիմնականում երեք ուղղությամբ. 1. աշխատեց կուսակցական ուժերը համախմբել, լամբայնդել ՀԿՊ լեհինյան միասնությունը, 2. շարունակեց Ալ. Մյասնիկյանի հետ սկսած աշխատանքը հանրապետության սովետական պետականության ստեղծման, նոր պետական ապարատի ամրապնդման ուղղությամբ, 3. ջանք չխնայեց հանրապետության ավերված ժողովրդական տնտեսությունը վերահանդիսելու և հետագա տնտեսական զարգացման ուղղություններն ու հեռանկարները պարզելու, որոշ շափով նաև դրանց հիմքերը դնելու համար:

³ Նույն տեղում, գ. 64, թ. 22:

⁴ Նույն տեղում, թ. 37:

⁵ Նույն տեղում, թ. 37:

Լուկաշինը քաջատեղյակ էր Հայաստանի ու հայ ժողովրդի կյանքին: Մինչև Հայաստան դալը նա նշունակալի ծառայություններ ուներ հայ աշխատավորների հեղափոխական պայքարին ու նրանց ալատագրությանը: Հիշատակենք միայն մեկ փաստ:

1917 թ. նոյեմբերին, գտնելով, որ Հոկտեմբերյան հեղափոխությունն իր խոսքը պետք է ասի նաև հայկական հարցի լուծման, հայ ժողովրդի նաև արևմտյան հատվածի ազատագրման վերաբերյալ, Լուկաշինը իր մտերիմ ընկերոջ՝ հայ մեծ բանաստեղծ, իսկ տվյալ սյա՛լին նաև նշանավոր բոլշևիկ Վահան Տերյանի հետ միասին Սմոլնիում այցելեց Լենինին և այդ հարցի շուրջը երկար դրույց ունեցավ նրա հետ: Վ. Ի. Լենինը ուղջունեց նրանց առաջարկը: Վ. Ի. Լենինի խորհրդով նրանք ղնացին Ազգությունների գործերի ժողկոմատ, միասին կազմեցին և ներկայացրին հայկական հարցի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ազատագրության վերաբերյալ իրենց թեղերը: Հետագայում, երբ Լուկաշինը մեկնել էր Ռոստով, Վ. Տերյանը շարունակեց գործը, համատեղ գրած թեղիսների հիման վրա կազմեց մանրամասն ղեկուցագիր, ինչպես նաև 1917 թ. ղեկտեմբերին Սովետական Թուսուստանի կառավարության ընդունած հայտնի «Թուրքահայաստանի մասին» ղեկրետի նախագիծը: Այդ ղեկրետը պատմական կարևոր ակտ էր, որի նախապատրաստմանը Տերյանի հետ միասին Լուկաշինի ունեցած մասնակցությունը նրա կյանքի ամենավառ էջերից մեկն է:

Բայց դա անցյալ էր: Լուկաշինը այժմ եկել էր Հայաստան, երբ ժողովրդի մի մեծ հատվածի ազատագրությունը արդեն փաստ էր: Եվ նա աշխատեց ժողովրդի քանդված ու ավերված տունը շինել, զարգացնել նրա տնտեսությունը, կուլտուրան:

Այ. Մյասնիկյանի, հանրապետության մյուս կուսակցական ու պետական ղեկավար գործիչների՝ Աշ. Հովհաննիսյանի, Ասք. Մոսվյանի, Սաքո Համբարձումյանի, Պ. Մակինցյանի, Գանուշ Շահվերդյանի, Արտ. Կարինյանի, Ար. Երզնկյանի, Հայկազ Բալյանի և այլոց հետ միասին Ս. Լուկաշինը ջանք շինակեց հանրապետության կուսակցական կազմակերպություններն ամրապնդելու, համախոհ մարդկանց մարտակուռ կոմունիստական ջոկատ ստեղծելու համար:

Այ. Մյասնիկյանը և Ս. Լուկաշինը իրենց ձեռքի տակ ունեին Վ. Ի. Լենինի Իմակր Կովկասի, այդ թվում նաև Հայաստանի կոմունիստ ընկերներին, ուր շարադրված էր երկրամասի կուսակցական կազմակերպությունների քաղաքական և տնտեսական լայն ծրագիրը: ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Լուկաշինը պեկավարվում էր այդ ծրագրով: Եվ բոլորին խորհուրդ էր տալիս ճշտորեն կատարել առաջնորդի ցուցումները, որովհետև գրանցում նա տեսնում էր երկրի վերաշինման, նրա զարգացման՝ գիտականորեն ճիշտ ուղին:

Լուկաշինը գտնում էր, որ Հայաստանին, որպես սոցիալիզմի ուղու վրա կանդնած մի երկրի, արդյունաբերության զարգացումն ավելի անհրաժեշտ է, քան մի այլ երկրի: Բայց նա չէր անգիտանում երկրի պարենային խիստ ծանր վիճակը, քաղցը, ղաղթականությունը, տասնյակ հազարավոր որբերի հառաչանքը: Ուստի գյուղատնտեսության վերականգնումը, ժողովրդի պարենային, նյութական վիճակի բարելավումը նա համարում էր առաջնային և անհետաձղելի խնդիր: «Մեր երկիրն առանց գյուղատնտեսության ոտքի կանդնել չի կարող», — ասաց Լուկաշինը 1922 թ. սկզբին հանրապետության

սովետների առաջին համագումարում⁶: Նա աշխատանքի կոչեց ողջ աշխատավորութանը, մի աշխատանքի, որը պետք է պարզ ու հասկանալի լիներ յուրաքանչյուրի համար և ամեն ոք պետք է գիտենար իր տեղը շինարարության ընդարձակ հրապարակի վրա: Ահա Լուկաշինի պատկերավոր խոսքը. «Մենք շինում, ստեղծագործում ենք մի աշխատանքի տաճար, բայց նախքան շինելը, մեր յուրաքանչյուր բանվորն ու աշխատավորը պետք է իմանա, թե ո՞ր աղյուսը ուր պիտի դրվի, ո՞ր քարը՝ որտեղ»⁷:

Լուկաշինը պարզից գնում էր բարդը. խաղողի հումքի վրա՝ գինու-սպիրտի արտադրություն, բամբակի հումքի վրա՝ տեքստիլ: Ապա գալիս էր լեռնահանքային արդյունաբերությունը: Առաջին երկուսի (ինչպես նաև ողջ գյուղատնտեսության զարգացման) համար անհրաժեշտ էր ոռոգման ցանցի ընդարձակում, իսկ լեռնահանքային, ինչպես նաև ողջ արդյունաբերության զարգացման համար էլեկտրակայանների ցանցի ընդարձակում: Լուկաշինը մեծ կարեւորություն էր տալիս թե՛ մեկին, թե՛ մյուսին: Նա մտածում էր ո՛չ միայն տվյալ օրվա մասին:

«Մեր աճող սերունդը, — ասում էր նա, — իր աշխատանքի գլխավոր տեղը գտնելու է քաղաքի գործարաններում...»⁸: Եվ ամենայն ուժով շեշտը դնում էր արդյունաբերության զարգացման վրա: Եվ դա չէր համարում ինչ-որ կամպանիա, ժամանակավոր երևույթ: Արդյունաբերության զարգացումը Լուկաշինի համար մշտական, հարատև պրոցես էր: 24^Պ 4-րդ համագումարում նա հայտարարեց. «...Հայաստանի արդյունաբերության զարգացումը ոչ թե մոդայի գործ է, այլ մեր սոցիալիստական պետության ամրապնդման լավագույն միջոցը...»⁹: Նա արդյունաբերության զարգացման գործում բացառիկ նշանակություն էր տալիս երկրի էլեկտրիֆիկացմանը: Նա ասում էր. «էլեկտրիֆիկացիայի խնդիրը մեր երկրի համար նոր ու մեր սիրած գործն է»: Չէր չափազանցնում նա ասելով «մեր սիրած գործն է»¹⁰: Լուկաշինը ամբողջ հոգով ողջունեց երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանը, տառ առ տառ ուսումնասիրեց այն, ծանոթանալով առաջավոր կապիտալիստական երկրներում էլեկտրակայանների կառուցման սխեման և գործի անցավ:

1921—1925 թվականներին վերականգնվեցին Արարատյան դաշտավայրի և ռեսպուբլիկայի մյուս վայրերի նախկին ջրանցքները, էլեկտրակայանները, կառուցվեցին նորերը, հիմքեր ստեղծվեցին գյուղատնտեսության ու արդյունաբերության հետագա զարգացման համար:

Լուկաշինը կառուցողների հետ էր: Ոգևորում էր Սարգարաբադի ջրանցքը վերականգնողներին, անձամբ այցելում էր Շիրակի ջրանցքի շինարարության վայրը, ուր մեծ տաղանդով աշխատում էր շինարարության պետ՝ ականավոր ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը, օգնում էր Երևանի հիդրոէլեկտրակայանը կառուցողներին, սարքավորումներ էր հայթայթում ոչ միայն Երևանի բամբակազտիչ գործարանի, այլև Լենինականի տեքստիլ գործարանի համար, իսկ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը արագ վերականգնելու, երկրի շինանյութերի առատ պաշարները արդյունավետ օգտագործելու հարցերը բարձ-

⁶ Տե՛ս «Սորհրդային Հայաստան», № 37, 15 փետրվարի 1922 թ.:

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս «Սորհրդային Հայաստան», № 269, 1922 թ.:

⁹ Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին Կից ՄԼԻ-ի ՀՆԱ, Գ. 1, ց. 5, դ. 1, թ. 167—168:

¹⁰ Տե՛ս «Սորհրդային Հայաստան», № 270, 1922 թ.:

րացնում էր անգրկովկասյան և միութենական կառավարութիւնների առաջ և հետևում, որ բաց թողնված ամեն մի կոպեկը օգտագործվի խելացիորեն, շշուաշուա միջոցները: Նա գիտեր, որ միջոցները քիչ են: Բայց էլ ավելի լավ գիտեր, որ միևնույն միջոցը խելացի օգտագործելու դեպքում միշտ ավելի շատ արդյունքի կարելի է հասնել: 1924 թ. օգոստոսին, երբ ավարտվեցին Շիրակի ջրանցքի թունելային աշխատանքները, նա ի լուր ամենքի գրեց. «Խորհրդային հանրապետության մեջ աշխատավորության կենտրոնացած աշխատանքը փոքր միջոցներով անգամ կարող է հեղափոխություն ստեղծել մեր տնտեսության ասպարեզում»:

Բայց դրա համար նախ պետք էր տնտեսություն իմանալ: Լուկաշինը իր կոլեգաներից այդ էր պահանջում: Նա գործիմաց, հմուտ աշխատանքի կողմնակից էր: Եվ աշխատանքի մեջ էր տեսնում մարդու մեծությունը: Անդրադառնալով գյուղի հարցերին, մի առիթով ասել է. «Գյուղում թե՛ կուսակցականը, և թե՛ կոմերիտականը չպետք է պահի իրեն որպես իշխանավոր: Ոչ թե իրավունքի, այլ պարտականությունների առավելություններն է, որ տարբերում է կոմերիտականին կամ կուսակցականին անկուսակցականից»:

Լայն է Լուկաշինի գործունեության ասպարեզը: Նա մեծ նշանակություն էր տալիս Սովետական Հայաստանի արտաքին տնտեսական ու քաղաքական կապերի ընդարձակմանը, ինչով հնարավոր էր, նպաստում էր սփյուռքահայության հայրենադարձությունը կազմակերպելուն, ՀԿՊ Կենտկոմի նախագահության նիստերում խնդիր էր դնում ուժեղացնել ՀԿՊ կապերը արտասահմանի հայ առաջադեմ կազմակերպությունների հետ: Այդ բոլորով հանդերձ չէր արհամարհում օտարերկրյա, թեկուզ և կապիտալիստական պետությունների ու առանձին միավորումների առաջարկները երկրի տնտեսությունը վերականգնելու վերաբերյալ, եթե իրոք դրանք հուսալի էին ու օգտակար: Այդ տեսակետից օրինակ կարող է ծառայել ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հետ ՀՍՍՌ կառավարության վարած հմուտ քաղաքականությունը: Թույլ չտալով, որ այդ կոմիտեի գործիչները թափանցեն քաղաքականության բնագավառը և իրենց ձեռքը վերցնեն մանուկների դաստիարակության գործը, Լուկաշինն ամեն ինչ անում էր, որ կոմիտեն միջոցներ տրամադրի որք երեսնաների գոյությունը պահպանելու, նրանց կրթելու համար, մինչև որ սովետական կառավարությունը ի վիճակի կլինի իր միջոցները տրամադրել այդ նպատակին:

Լուկաշինը խորապես մտահոգված էր հայ կուլտուրայի զարգացմամբ: Ոգևորում էր գրողներին ու ճարտարապետներին, նկարիչներին ու երաժիշտներին: Ակադեմիկոս Ալ. Խամանյանը նրա հետ էր խորհրդակցում Երևան քաղաքի հատակագիծը մշակելիս, մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը նրա խորհրդով էր նկարում Անդրֆեդերացիայի պետական գերբը, որը և շահեց առաջին մրցանակը: Լուկաշինը չէր մերժում Ն. Չարենցին, երբ նա իր և իր կոլեգաների գրվածքները հրապարակելու համար միջոցներ էր խնդրում, թեև միջոցները շատ սուղ էին: Բոլորը թվարկել չի լինի: Բայց շմուռնանք նշել և այն փաստը, որ Լուկաշինը խորապես ուսումնասիրում էր հայ ժողովրդի կուլտուրան: Աշխատում ետ շմնալ երկրի կուլտուրական առաջընթացից և առանց հոգնելու պարապում էր իր վրա: Հայաստան գալու առաջին տարին Լուկաշինը խուսափում էր իր իմացած գրիմահայ բարբառով հրապարակային ելույթներից: Գիտակցում էր, որ կուսակցական գործչին դա վայել չէ և համառորեն ուսումնասիրում էր հայոց գրական լեզուն: Եվ եթե սկզբում նրա զեկուցումները

ուսերենից թարգմանվում էին հայերեն, ապա հաջորդ տարիներին, նա հասարակական հաշտության բյուրոներ էր ունենում թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն: Եթե դրան ավելացնենք և այն, որ նա սակավապես մարդ էր, մի իսկական կոմունիստական ասկետ, որը երբեք իրեն վատ չէր զգում միակ շինելի և մի զույգ սպառնալի մեջ, որևէ հոգ չէր տանում իր աշխատանքային առանձնասենյակն ու բնակարանը շքեղ կահավորելու մասին և իր աշխատավարձից խնայած ռուբլիները ամենայն սիրով կտրամադրեր մի որևէ հանրօգուտ նպատակի, ապա դրանից հետո ավելի պարզ կղաղնա, թե ինչո՞ւ Լուկաշինը ամենակարճ ժամանակամիջոցում արժանացավ աշխատավոր ժողովրդի ամենաջերմ սիրուն և վստահությանը:

Լուկաշինի աշխատանքը Հայաստանում իսկական բուլշևիկի հայերենասիրական մի գործունեություն էր: Նրան տրված բնութագրի մեջ ՀԿՊ Կենտկոմը ժամանակին գրել է. «Ընկերը փաստորեն ղեկավարում է հանրապետության ողջ քաղաքական և տնտեսական կյանքը. հավասարապես լավ կողմնորոշվում է բոլոր պրակտիկ գործերում, ինչպես կուսակցական, նույնպես և սովետական: Աչքի ընկնելով անսովոր աշխատասիրությամբ և եռանդով, բազմակողմանի գիտողականությամբ և կողմնորոշվելու արագությամբ, նա հանրապետության կյանքը ընդգրկում է նրա բոլոր էական դրսևորումներով հանդերձ: Կուսակցության և սովետական իշխանության սուղև ղեկավար կոնկրետ խնդիրներ, ղեկավարվում է բացառապես քաղաքական նպատակասլացության և պրակտիկ իրականանալիության նկատառումներով: Մեծ ձեռներեցության տեր աշխատող է, գերազանցապես տնտեսական հարցերում: Տնտեսական և կուսակցական շինարարություններում անփոխարինելի է և կարող է իրեն դրսևորել լայն մասշտաբով»¹¹:

Այս բնութագրությունը իրեն արդարացրեց և հետագայում, երբ Լուկաշինը 1925 թ. կեսերին աշխատանքի անցավ Անդրֆեդերացիայի ժողկոմսովետում, իսկ 1928-ի սկզբից ՍՍՌՄ ժողկոմսովետի աշխատանքի և պաշտպանության խորհրդում:

Անդրֆեդերացիայի սիստեմում աշխատած երկու և կես տարվա ընթացքում Լուկաշինը եղավ երկրամասի ժողկոմսովետի նախագահի տեղակալ, բարձրագույն տնտեսական խորհրդի նախագահ, պետպլանի նախագահ, առևտրի ժողկոմ, բանգյուղ-տեսչության ժողկոմ: Ըստ որում նա անընդմեջ կուսակցության կենտրոնական կոմիտեի ու նրա նախագահության անդամ էր, իսկ բանգյուղ-տեսչության ժողկոմ եղած ժամանակ նաև կուսակցության երկրային վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:

1928 թ. սկզբին տեղափոխվելով աշխատանքի Մոսկվա, Լուկաշինը նշանակվեց ՍՍՌՄ ժողկոմսովետին կից աշխատանքի և պաշտպանության խորհրդի շինարարության կոմիտեի նախագահ: Միաժամանակ նա ՍՍՌՄ ԺՏԳԽ-ի նախագահության անդամ էր: 1930 թ. և մինչև 1931 թ. մարտ ամիսը Լուկաշինը ՍՍՌՄ պետպլանի նախագահության անդամ էր և պետպլանի շինարարության հանձնաժողովի նախագահը: 1931 թ. սկզբին, երբ երկրի շինարարական հիմնարկների ղեկավարման մեջ կոռուցվածքային փոփոխություններ մտցվեցին և ՍՍՌՄ ԺՏԳԽ-ի սիստեմում ստեղծվեց շինարարական արդյունաբերության և հումքային ծագում ունեցող շինանյութերի պետական համամիութենական

11 Տե՛ս ՄԼԻ-ի ՎՅԱ (Քրիլիսի), ֆ. 13, ց. 1, մ. 1, գ. 111, թ. 36:

միավորումը՝ Սոցիալիստիկ, Լուկաշինը նշանակվեց նրա վարչության նախագահի տեղակալ, իսկ նույն տարվա դեկտեմբերից՝ նախագահ, միաժամանակ մնալով ժՏԳԽ-ի նախագահության անդամ: 1932 թ. հունվարից ժՏԳԽ-ը վերացվելու կապակցությամբ «Սոցիալիստիկ» հանձնվեց նորաստեղծ ՍՍՌԹ ժանր արդյունաբերության ժողովրդատի իրավասությանը, վերանվանվելով Ծանր արդյունաբերության ժողովրդատի շինարարական արդյունաբերության կենտրոնական պետական համամիութենական միավորում՝ «Ցենտրոսոցիալ»: Լուկաշինը նշանակվեց վերջինիս վարչության նախագահ և ՍՍՌԹ ժանր արդյունաբերության ժողովրդատի կոլեգիայի անդամ: 1935 թ. սկզբից մինչև իր ձերբակալությունը՝ 1937 թ. հունիսը, Լուկաշինը նույն այդ ժողովրդատի ցեմենտի արդյունաբերության կենտրոնական պետական համամիութենական միավորման («Սոցիալցեմենտ») վարչության նախագահն էր:

1925—1937 թվականները ՍՍՌԹ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հզոր վերելքի տարիներ էին, գյուղատնտեսության կոլեկտիվացման, երկրի ինդուստրացման, տեխնիկայի, գիտության ու կուլտուրայի ուժգին զարգացման տարիներ: Եվ այսօր, երբ մենք աշխարհի առաջ հպարտորեն խոսում ենք սոցիալիզմի լիակատար հաղթանակի մասին, մեծ շափով պարտական ենք այդ տարիներին բանվորների ու գյուղացիների, սովետական ինտելիգենցիայի, ժողովրդական տնտեսության կազմակերպիչների, կուսակցական և սովետական աշխատողների գործադրած մեծ եռանդին, նրանց ստեղծագործական սխրանքներին: Լուկաշինը նրանց հետ էր, ընթանում էր սոցիալիզմ կառուցողների առաջին շարքերում, ամենայն անկեղծությամբ և կատարյալ ինքնամոռացությամբ իր բոլոր ուժերն ու ընդունակությունները նվիրում էր մարդկության մեծ երազանքների իրականացմանը:

Տեղափոխվելով աշխատանքի Թբիլիսի, Լուկաշինն անմիջապես ձեռնամուխ եղավ երկրամասի արդյունաբերության վիճակի, նրա վերականգնման ուղղությամբ ձեռնարկված միջոցների և վարգացման հեռանկարների ուսումնասիրմանը: Նույն տարվա դեկտեմբերին նա Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների 4-րդ համագումարում հանդես եկավ «Անդրկովկասի արդյունաբերության զարգացման հերթական խնդիրները» զեկուցմամբ: Մեկ ամիս անց՝ 1926 թ. հունվարին, Անդրկովկասի Կենտգործկոմի հերթական սեսիան մեծ հետաքրքրությամբ լսեց և քննարկեց Լուկաշինի զեկուցումը Անդրկովկասի տնտեսական զարգացման դրության մասին: Դրանից առաջ և հետագայում նույնպես Լուկաշինը, որպես կուսակցության երկրային կոմիտեի նախագահության անդամ, երկրային կոմիտեի պլենումներում և նախագահության նիստերում հաճախակի զեկուցում էր, ելույթներ ունենում, մտցնում իր առաջարկները երկրամասի արդյունաբերության և տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման ուղիղտայ միջոցների մասին: Նրա խոսքը ամենայն ուշադրությամբ լսում և հաշվի էին առնում Ս. Օրջոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը, Մ. Օրախելաշվիլին, Մ. Ցխակայան, Հմ. Նազարեթյանը, Ս. Աղամալի-օղլին, Ս. Կասյանը, երկրամասի մյուս կուսակցական և սովետական ղեկավար գործիչները, աշխատավորության լայն խավերը:

1927 թ. հունիսին կուսակցության Անդրերկրումի և երկրային վերստուգիչ հանձնաժողովի միացյալ պլենումում նա ընդգծում էր, որ արդյունաբերական շինարարությունը երկրի ընդհանուր տնտեսական աշխատանքում և կուսակցության քաղաքականության մեջ պետք է բռնի առաջին տեղը: Երկրամասա-

յին կուսակցական, սովետական ու տնտեսական օրգաններին Լուկաշինը մատնացույց էր անում այն փաստը, որ 1923—1924 և 1925—1926 տնտեսական տարիներին Անդրկովկասում շինարարությունը պատշաճ պլանավորում չի ունեցել, բացակայել է նորակառույցների տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, ավելին. կառույցները չեն ունեցել անգամ տեխնիկական նախագծեր, վերջիններս կազմված են եղել աչքաշափով, անպատրաստ տեխնիկական կադրերի կողմից¹²: Եվ Լուկաշինը խնդիր էր դնում հիմնովին վերանայել, գիտական հիմքերի վրա դնել ողջ արդյունաբերական շինարարության գործը երկրամասում:

Ահա նրա խոսքերը.

«...Մեր առջև կանգնած է մի խնդիր. ամբողջ շայնությունը դնել մեր շինարարությունը ողջ ծավալով ուսումնասիրելու պրոբլեմը...»¹³:

Եվ ապա՝ «Կուսակցության առջև կանգնած են շինարարության մեջ փոշիացումը, ցրվածությունը, անսխտեմությունը վերանայելու հարցերը, կուսակցության առջև կանգնած է շինարարության մեջ արդյունավետության հասնելու հարցը, աշխատողների կադրերը պահպանելու անհրաժեշտության հարցը, շինարարությունը էժանացնելու հարցը և այլն»¹⁴:

Լուկաշինը հեռատես տնտեսվար էր: «Զէ՞ որ մենք կառուցում ենք ոչ թե մի տարվա, այլ տասնյակ տարիների համար...»¹⁵,— ասում էր նա, և խնդիր դնում կառուցելուց առաջ մտածել, թե ինչպիսի էֆեկտիվություն կունենա տվյալ օբյեկտը տասնյակ տարիներ հետո. Տնտեսական էֆեկտիվությունը, ասում էր Լուկաշինը, կապիտալ շինարարության գլուխ կանգնած կոմունիստտիրոջ հիմնական խնդիրը պետք է լինի: Էժան և արդյունավետ կառուցելու խնդրին Լուկաշինը առաջնակարգ նշանակություն էր տալիս. «ես կարծում եմ,— ասում էր նա 1927 թ.,— որ կուսակցության համար, որն այժմ ձեռնամուխ է եղել երկրի ինդուստրացմանը, սոցիալիստական շինարարության ամուր հիմքերի ստեղծմանը, առանձնապես կարևոր է շահութաբեր ձեռնարկություններ կառուցել սովորելու հարցը»¹⁶:

Բայց Լուկաշինը սոսկ պահանջող, թեզեր առաջադրող մարդ չէր: Այս խնդիրները նախ վերաբերում էին աշխատանքի այն բնագավառներին, որոնց անմիջական ղեկավարն ինքն էր. երկրամասի բարձրագույն տնտեսական խորհրդին, պետպլանին, բանդյուդտեսչությանը: Եվ նրա ամենօրյա գործունեությունն ուղղված էր հենց երկրամասի ժողովրդական տնտեսության, առաջին հերթին արդյունաբերության գիտականորեն ճիշտ, պլանային զարգացմանը: Ուսումնասիրել Լուկաշինի, նրա ղեկավարած հիմնարկությունների այդ տարիների գործունեությունը, նշանակում է բացահայտել Անդրկովկասի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը կազմելու պատմությունը, այդ պլանի տնտեսագիտական և քաղաքական հիմնավորումները, որոնք անպայման ունեն նաև այժմեական նշանակություն:

Լուկաշինը, լինելով գործունյա և աշխատասեր մարդ, դժվարությունից չվախեցող, թերությունները շլոժկող գործիչ, տանել չէր կարողանում բյուրոկ-

12 ՏՆ՝Ս ՄԼԻ-ի ՎՅՂ, ֆ. 13, ց. 1, գ. 1966, թթ. 125—141:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

16 Նույն տեղում:

րատիղման ու բյուրոկրատներին: Ժողովրդական տնտեսության զարգացման, երկրի սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունների համար ամենավնասակար թերությունները, նա համարում էր բյուրոկրատական խեղաթյուրումներն ու մասսաներից կտրվածությունը, շափից ավելի կենտրոնացումն ու աշխատողների մոտ կոմունիստական ոգու պատշաճ չափի բացակայությունը: Նա ոչ թե հրամանների, այլ գործի սիրահար էր: Իսկ գործը նրա խորին համոզմամբ չի կարելի ինքնահոսի թողնել, հետևել է պետք, ստուգել: «Մենք բոլորս հրամայել կարողանում ենք,— ասում էր նա,— բայց ստուգել, թե ինչպես է իրագործվում այդ հրամանը, քանի տոկոսով, չենք կարողանում»¹⁷: Ամբողջ անդրկովկասյան կուսակցական ակտիվը Լուկաշինի մեջ տեսավ աշխատող մարդուն, ժողովրդական տնտեսության ուղղակի կյանքի դիտակազմակերպչին: Երբ 1927 թ. հունիսին կուսակցության Անդրերկրմի պլենումում Մ. Օրախելաշվիլին առաջարկեց Լուկաշինին ընտրել երկրամասային կուսակցական վերստուգիչ հանձնաժողովի նախագահ և բանգյուղտեսչության ժողկոմ, ազատելով նրան պետականի նախագահի պարտականություններից, տարակույսներ եղան, որ դրանով Լուկաշինը կհեռանա տնտեսության ղեկավարումից, նրա հսկայական փորձն ու գիտելիքները պատշաճ ձևով չեն օգտագործվի, ապա նույն Մ. Օրախելաշվիլին, իր առաջարկը անցկացնելու համար կրկին ելույթ ունեցավ և հույս հայտնեց՝ «Ընկ. Լուկաշինը մնում է Անդր. ԺԿՍ-ի նախագահի տեղակալ և բարձրագույն տնտեսական խորհրդի (ԲՏԽ) նախագահ, իսկ վերջինս հանդիսանում է Անդրկովկասի բարձրագույն տնտեսական կարգավորիչ օրգանը, քանի որ մեզ մոտ ժողտնտխորհ չկա:.. Ես կարծում եմ ընկ. Լուկաշինը, գտնվելով ԺԿՍ-ի նախագահի տեղակալի և ԲՏԽ-ի նախագահի տեղակալի պաշտոններում, հնարավորություն կունենա կիրառել, որտեղ հարկավոր է, իր տնտեսական ընդունակությունները»¹⁸:

Ընդամենը յոթ-ութ ամսից հետո Լուկաշինն իր այդ ընդունակությունները ոչ պակաս եռանդով կիրառում էր ավելի լայն՝ համամիութենական մասշտաբով, այդ պահից մոտ տաս տարի շարունակ գտնվելով երկրի արդյունաբերական շինարարության ղեկավարման ամենաբարձր պոստերում:

Այդ տարիներին Լուկաշինը անմիջապես աշխատում էր ՍՍՌՄ պետականի նախագահ Գ. Կրժիժանովսկու, ՍՍՌՄ ԺՏԳԽ-ի նախագահ Վ. Վ. Կուլբիչևի հետ, որին այդ պոստում հաջորդեց Գ. Կ. Օրջոնիկիձեն: Լինելով նրանց գլխավորած նախագահությունների ու կոլեգիաների անդամ, Լուկաշինը կուսակցության այդ ականավոր գործիչների, երկրի ժողովրդական տնտեսության այդ տաղանդավոր կազմակերպիչների մոտ բարձր հարգանքի արժանացավ, իր անխոնջ աշխատանքով ձեռք բերեց բարձր հեղինակություն երկրի տարբեր մարզերի ու հանրապետությունների շինարարների, կուսակցական ու պետական գործիչների մոտ:

Լուկաշինը գլխավորում էր մեքենաշինական ու քիմիական ձեռնարկությունների կառուցման գործը, ապահովում էր շինանյութերի արտադրությունն ավելացնելու մասին կուսակցության գիրկետիվների անխափան կատարումը: 1930 թ. եղավ 1-ին հնգամյակի խոշոր շինարարական օբյեկտների հիմքերը զգելու տարին: 1931 թ. շինարարական աշխատանքները էլ ավելի լայն ծավալ

17 Տե՛ս ՄԼԻ-ի ՀՅԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, ք. 171:

18 Տե՛ս ՄԼԻ-ի ՎՅԱ, ֆ. 13, ց. 1, գ. 1968, ք. 230:

րնդունեցին: 1931—1932 թթ. ամբողջ երկիրը ծածկված էր նորակառույցներով: Կառուցվում էին Կուզնեցկի և Մազնիտոպոսկի կոմբինատները, երկրի խոշորագույն մեքենաշինական ձեռնարկություններն ու հիդրոէլեկտրակայանները, բացվում էին նոր հանքավայրեր, կառուցվում էին նոր քաղաքներ: Այդ տարիների մասին ՍՍՄԹ ծանր արդյունաբերության ժողկոմ Ս. Օրջոնիկիձեն ասում էր. «Մեզանում շկան քիչ կարևոր աշխատանքներ: Մեզանում շկան անպատասխանատու պաշտոններ: Մեզանում չպետք է լինեն նաև անձեռներեց մարտիկ»¹⁹:

Լուկաշինը հենց ինքը Ս. Օրջոնիկիձեի հետ աշխատող ամենաձեռներեց մարդկանցից մեկն էր: Մի մարդ, որը կատարյալ ինտերնացիոնալիստ էր և իրեն այդպիսին էր դրսևորել Հայաստանում ու Անդրկովկասում, Մոսկվայում աշխատանքի անցնելուց հետո: Նա Ս. Օրջոնիկիձեի, Կիրովի, Մյասնիկյանի ու երկրամասում մյուս ականավոր կուսակցական գործիչների հետ միասին խոշոր ավանդ էր մուծել Անդրֆեդերացիայի կազմակերպման գործում: Կուսակցության 12-րդ համագումարում նա վճռականորեն դուրս եկավ վրացական նացիոնալ-ուկրոնիստների դեմ, որոնք փորձում էին ձախողել երկրամասի ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու կուսակցական անխախտ դաշինքը: Կուսակցության 15-րդ համագումարում Լուկաշինը մերկացրեց օպոզիցիոնների վտանգավոր գործողությունները, վճռականապես դեմ արտահայտվեց նրանց հակակուսակցական գործողություններին: Եվ այստեղ էլ նա խնդրին նայեց երկրի տնտեսական դարգացման տեսանկյունից: Նա ասաց, որ օպոզիցիոններների ներկուսակցական պայքարը հսկայական վնաս է հասցնում երկրի տնտեսական շինարարությանը: «Նա կարծում եմ,— ասաց նա,— որ մեր կուսակցական համագումարի կողմից վճռաբար հեռացնելով օպոզիցիոններին, մենք կղբաղվենք մեր երկրի սոցիալիստական շինարարության ստեղծագործ աշխատանքով»: Եվ հենց նույն համագումարում էլ նա սրեց երկրի էլեկտրիֆիկացման, քիմիական արդյունաբերության դարգացման հարցերը²⁰:

Իր մեծ ձեռներեցության համար, պետական առաջադրանքների անթերի կատարումն ապահովելու համար Լուկաշինը 1936 թ. պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Բայց դա ավելի էր կատաղեցնում կուսակցության շարքերը սղոսկած թշնամուն՝ Բերիային ու նրա կողմնակիցներին: Բերիան իր նողկալի գործունեության համար մի կողմից սլարարտ հող էր ստեղծում Ստալինի անձի պաշտամունքը խորացնելով, իսկ մյուս կողմից օգտագործում էր երկրում դասակարգային պայքարը ուժեղացնելու, սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց հակաժողովրդական տարրերի աշխուժացման մասին Ստալինի առաջ քաշած վնասակար, մտացածին դրույթները: Եվ Լուկաշինը 1937 թ. հունիսի 20-ին անսպասելիորեն ձերբակալվեց: Դրան հաջորդեց նրա եղբունական մահը:

Լուկաշինի մահով կուսակցությունը և ժողովուրդը զրկվեցին սոցիալիզմի լավագույն տնտեսավարներից մեկից: Նրա և նրա նման շատ շատերի մահը ուղղակի հարված էր մեր երկրի ժողովրդական տնտեսությանը, մեր երկրում սոցիալիզմի կառուցմանը: Դաստիարակության և աշխատանքի լենինյան դպրոցն անցած շատ ու շատ լավատուն կադրերի ջարդն իր հերթին զգալի

¹⁹ Տե՛ս Գ. Կ. Օրջոնիկիձե (биография), М., 1962, стр. 269.

²⁰ Տե՛ս XV съезд ВКП(б), стено. отчет, М., 1928, стр. 529.

վնաս հասցրեց նաև այդպիսի նոր կադրերի պատրաստմանը, ժողովրդական տնտեսության լենինյան ղեկավարմանը:

Սակայն ժողովուրդը կուսակցության գլխավորությամբ իր մեջ հսկայական ուժեր ունի կուտակած և իր ստեղծագործ աշխատանքով հաղթահարում է կոմունիզմի կառուցման ճանապարհի բոլոր դժվարությունները: Այդ մեծ նպատակին է ծառայում նաև ժողովրդի անձնվեր զավակների, հեղափոխական գործիչների մեծարումն ու նրանց հիշատակի հավերժացումը: Սերունդները հարգանքի տուրք մատուցելով աշխատավորների ազատագրության և նրանց երջանիկ կյանքի համար մղված պայքարում աչքի ընկած նշանավոր պատմական անձնավորություններին, հիշում են օրինակն այն մարդկանց, որոնց կուզինային, որ նմանվեն իրենց ժամանակակիցները՝ շարքային անձնավորություններից, մինչև առաջնակարգ պետական, կուսակցական գործիչները:

Մեծարելով Լուկաշինին, մենք պարզ տեսնում ենք պրոլետարական հեղափոխական հայ գործիչների, լենինյան գվարդիայի նշանավոր հայ ներկայացուցիչների բռնած ուղու արդարացիությունը, նրանց քաղաքական ողջ խոհեմությունը: Եվ դա առանձնապես վառ կերպով երևում է այսօր՝ արևմրտահայության զազանային կոտորածի հիսնամյակի նախօրյակին, երբ Սովետական Հայաստանը դարձել է ողջ առաջադեմ հայության ձգողության կենտրոնը, հայ ժողովրդի ո՛չ միայն ֆիզիկական գոյության պատվարը, այլև նրա պետականության, տնտեսության ու կուլտուրայի բարգավաճման ապահով օջախը՝ Սովետական Միության ժողովուրդների մեծ ու անխախտ ընտանիքում:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հետևողական կերպով վերացնում է հեղափոխական անցյալի և սովետական հասարակության պատմության լուսարանման սուպարեզում անհատի պաշտամունքի տարիներին թույլ տրված խեղաթյուրումները: Սովետահայ գիտնականները մեծ աշխատանք են տանում պատմական ճշմարտությունը գիտականորեն բացահայտելու ուղղությամբ: Հարգանքի արժանի տուրք է մատուցվում լենինյան գվարդիայի հին զինվորներին: Այն գործը, որի համար նրանք անխոնջ պայքար էին մղում, շարունակվում է անշեղ կերպով: Հանրապետության ժողովրդական տնտեսությունը, գիտությունն ու կուլտուրան այսօր վերելք են ապրում: Առջևում ավելի մեծ են հեռանկարները: Աշխատավորությունը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ առաջ տանելով կոմունիստական շինարարության գործը, գրունով իսկ հավերժության հուշարձան է կանգնեցնում բոլոր նրանց շիրիմներին, ովքեր ընկել են սոցիալիզմի ու կոմունիզմի համար մղվող պայքարի մեծ ճանապարհին:

А. Н. Карапетян

САРКИС ЛУКАШИН

(К 80-летию со дня рождения)

Р е з ю м е

Саркис Лукьянович Лукашин (Срапионян) один из видных деятелей Коммунистической партии и Советского государства. В 1937 г. он пал жертвой произвола периода культа личности.

Его многогранная деятельность еще не изучена, много интересных страниц его жизни, представляющих научную ценность для истории революционного движения и истории КПСС, в частности для истории социалистического строительства в нашей стране, долгое время были преданы забвению.

С. Л. Лукашин родился 13 января 1885 года (по старому стилю 1-го января 1885 г.) в сел. Топти (ныне с. Крым) Ростовской области на Дону.

Вступил он в большевистскую партию в 1905 г. В период Первой русской революции был активным ее участником. В 1909—1910 гг. находился в эмиграции. Возвратившись, продолжал учебу и в 1911 г. окончил юридический факультет Петербургского университета и третий курс экономического отделения политехнического института столицы.

В дни Февральской революции С. Лукашин, находясь в армии, был избран председателем армейского комитета, а также депутатом Петроградской думы и принял активное участие в работах ее большевистской фракции.

После победы Октябрьской революции С. Лукашин на Дону. В апреле 1918 года Первый съезд Советов Дона избрал его комиссаром юстиции Донской Советской республики. После временного падения Советской власти на Дону С. Лукашин находился в первых рядах борцов против белогвардейских и иностранных интервентов. В сентябре 1918 г. С. Лукашин ЦК РКП (б) был утвержден в составе Донбюро партии. После восстановления весной 1920 г. Советской власти на Дону С. Лукашин стал одним из руководящих партийных деятелей области. В марте 1921 г. он избран секретарем Донского комитета РКП (б).

В мае 1921 г. С. Лукашин вместе с Ал. Мясникяном ЦК РКП(б) направлен на работу в Армению. Вначале он назначен секретарем ЦК КПА, а с 1922 г. председателем Совнаркома республики.

С лета 1925 г. до начала 1928 г. Лукашин работал в системе Закавказья в качестве заместителя председателя СНК ЗСФСР, председателя ЗакВЭС, наркома РКИ и председателя ЗКК РКП (б) а также занимал ряд других руководящих должностей. С 1921 г. по 1928 г. С Лукашин бессменный член Президиума Закрайкома партии.

С марта 1928 г. С Лукашин работал в Москве. Был он председателем Комитета по строительству ВЭС при СНК СССР, членом Президиума Госплана СССР и председателем Сектора строительства Госплана СССР, председателем Правления промышленности строительных материалов ВСНХ и членом президиума ВСНХ, председателем Всесоюзного Центрального Государственного Объединения строительной промышленности НКТП СССР и членом коллегии НКТП СССР, и т. д.

С. Лукашин делегат XI, XII, XIII, XIV, XV съездов партии. XIV съезд избрал его кандидатом в члены ЦК ВКП(б). С. Лукашин один из крупных организаторов Социалистического строительства СССР.